ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

0095, ք.Երևան, Մ.Բաղրամյան պող., 19 Հեռ./ֆաքս՝ + 374 11 513 424

096-Ե-111

«Հետք» պարբերականի լրագրող

տիկին Սեդա Ղուկասյանին

Հարգելի՛ տիկին Ղուկասյան,

Ի պատասխան Ձեր 18/05/2018 թվականին ուղարկված հարցերին, հայտնում եմ, որ

1. Ես շարունակում եմ հավատարիմ մնալ ազատականության սկզբունքներին, որոնք պնդում են, որ յուրաքանչյուր իրավունակ քաղաքացի կարող է և պետք է ինքնուրույն տնօրինի իր սեփականությունը, դրա կուտակման և հետագայում օգտագործման ձևերը, ինքը որոշի՝ ինչպես ապահովել իր բարեկեցիկ ծերությունը, իսկ պետությունն ուղղակի դրա համար պետք է ապահովի անհրաժեշտ գործիքակազմը, տեղեկությունը հասանելի դարձնի հաարակության բոլոր շերտերին՝ ցույց տալով թե՛ դրական, թե՛ հնարավոր բացասական կողմերը: Սեփականության, այդ թվում եկամտի տնօրինումը բացարձակ իրավունք է, որն ամրագրված է Սահմանադրությամբ, և յուրաքանչյուր իրավունակ քաղաքացի պետք է ազատ լինի ինքնուրույն տնօրինելու իր ֆինանսական միջոցները:
2. Կենսաթոշակային ֆոնդերը կառավարող Ձեր նշած ընկերությունների մասին ստացել եմ տեղեկություն Կենտրոնական բանկից, ՀՀ-ում նշված ընկերությունների ներկայացուցիչներից: Տրամադրված և բաց աղբյուրներում առկա տեղեկության հիման վրա իմ կողմից նշված կազմակերպությունների նկատմամբ ձևավորվել է վստահության որոշակի աստիճան, որը թեև բացարձակ չէ, բայց բավական է իմ եկամուտների որոշակի մասը նրանց կառավարման հանձնելու համար, իհարկե, կամավոր սկզբունքով:
3. Հետևել եմ իմ գումարների հոսքին http://www.epension.am կայքի միջոցով, չեմ փորձել փոխել կառավարչին, իսկ օրենքի հեղինակների հետ համամիտ եմ այնքանով, որ ֆինանսական գրագիտության առկայության դեպքում, համապատասխան գործիքակազմն օգտագործելով, գնահատելով առկա ռիսկերը նոր միայն հնարավոր է ապահով ծերություն ունենալը: Նման համակարգի ներդրմանը պետք է նախորդեին լայնածավալ գործողություններ՝ համակարգի ազդեցությանը ենթարկվող քաղաքացիների մոտ ֆինանսական գրագիտության բարձրացման ուղղությամբ:

4. Պայմանավորված վերջին երկու ամիսների ընթացքում կատարված փոփոխություններով՝ այս պահի դրությամբ չկա նման օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալու հրամայական, քանի որ նման նախաձեռնությամբ հանդես է եկել ՀՀ :

Հարգանքով՝

Գևորգ Գորգիսյան

«ԵԼՔ» խմբակցության քարտուղար